1284. *ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ. նախորդին մոտ, ջարդոտված ճակատին և թևերի շուրջը 3 տող.*

· · · · · · · · · · · · ԿԱՆԿՆԵՑԻ
ՋԽԱՉՍՓՐԿ· · · ՀՈԳԻՄՈՅ

ԹՎ | ՌԸ

.... ԿԱՆԿՆԵՑԻ| ՋԽԱՉՍ ՓՐԿՈՒԹՆ.
ՀՈԳ[Ո] ԻՄՈՑ: ԹՎ. :ՌԸ: (1559):

## ՎԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՇՈՐԺԱ ԳՅՈՒՂԵՐ

*Այս երկու փոքր գյուղերի հին անուններն անհայտ են։ Ներքին Շորժայում մնամ են մի փոքր եկեղեցու հիմնապատերը, որի մուտքի մոտ կանգնած են երկու գեղաքանդակ խաչքարեր, իրար ժամանակակից, մեկն ունի ։Չ։ թվականը. նույն տեղում կան նաև մի քանի տապանաքարեր։ Գյուղի հին գերեզմանատունը գտնվելիս է եղել եկեղեցուց ներքև, գետափին. այստեղ մնում են մի քանի տապանաքարեր միայն, մեկը կենցաղային քանդակներով՝ ։ՌԾԱ։ թվական (№ 1287)։*

*Վերին Շորժայում մնացել են միայն գերեզմանատան և եկեղեցու մնացորդները, գյուղից ներքև, գետափին. գերեզմանատունը ձորի լանջին է, տապանաքարերի մեծ մասը տափակ են՝ ծածկված վերևից իջնող հողով. երկուսի տապանագրերը հազիվ կարողացանք կարդալ. երկուսն էլ* XVII *դարի են։*

*Մեր ժողովածուում այս երկու գյուղերից ամփոփված են միայն 8 արձանագրություն, որոնցից 3-ն են հրատարակված եղել նախկինում։*

ՆԵՐՔԻՆ ՇՈՐԺԱ

1285. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է գյուղամիջի՝ ավերակ եկեղեցու մեջ. քիվին եղել է արձանագրություն, այժմ ջարդոտված. թևերի արանքներում մնացել է թվականը.*

ԹՎ | Չ

ԹՎ. :Չ: (1251):

1286. *ԽԱՉՔԱՐ. կանգնած է նախորդի մոտ, գեղաքանդակ, ճակատին սրբապատկերներ, քիվին ուռուցիկ տառերով.*

ՍԲ ՆՇԱՆՍ ՇԱՀՈՒՄԱՂԻՆ
ՔՍ . ԱԾ

ՍԲ. ՆՇԱՆՍ ՇԱՀՈՒՄ ԱՂԻՆ. ՔՍ. ԱԾ.

Ծանոթ. *Ըստ ամենայնի նման է նախորդին, նույն ժամանակի գործ է։*

*Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 19։*

1287. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է գյուղամիջում, եկեղեցուց ներքև, գետափի մոտ. հյուսիսային կողին հեծյալ, ձախ ձեռքում բռնած նետ ու աղեղ, մի աղեղ էլ առանձին՝ վերևում, առջևից փախչում է եղջերու, ապա մկրատ, սրինգանման իր, ըլիթ և գավ. արևմտյան ճակատին 7 տող.*

ԹՎՌԾԱ
ԵՍԱ
ՋԱՏ
ԿԱՆԿՆ
ԵՑԻՎԷ
ԼԻՃԱ
ՆԻՆ

ԹՎ. :Ռ[Ծ]Ա: (1602). ԵՍ Ա|ՋԱՏ| ԿԱՆԿՆ|ԵՑԻ Վ[Է]|ԼԻՃԱ|ՆԻՆ:

1288. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ. երեսին 4 տող.

ԱՅՍԷՏԱ
ՊԱՆՊԱՂ
ԻՆԹՎԻՆ
ՌՃԼԷԻՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԱՂԻՆ.
ԹՎԻՆ ։ՌՃԼԷ։ ԻՆ. (1688)։

1289. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել ավերակ եկեղեցու մոտ.

Սուրբ խաչս բարեխաւս Մաթոսին և կողակցին.

Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 19։

1290. ԽԱՉՔԱՐԻ վրա, նախորդի մոտ.

Այս է հանգիստ Փիրիմին։

Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 19

1291. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գետակի ափին, գյուղի հանդեպ, հին գերեզմանատան մեջ. երեսին 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՍԻՄՈՆԻՆ
ԹՎՌՃԻԸԷՐ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԻՄՈՆԻՆ.
ԹՎ. ։ՌՃԻԸ։ ԷՐ (1679)։

1292. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 7 տող.

ԱՅՍԷՏԱ
ՊԱՆՅԻՍ
ԱՅԽԱՆԻ
ՆՈՐԴԻԱ
ՌԱՔԵԼԻ
··ԹՎԻՆ
ՌՃԼԳԻՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅԻՍԱՅ ԽԱՆԻՆ,
ՈՐԴԻ ԱՌԱՔԵԼԻՆ[1]. ԹՎԻՆ
։ՌՃԼԳ։ ԻՆ (1684)։

## ԴԱՇՔԵՆԴ

Գյուղի հին անունն անհայտ է. տեղագիր հեղինակները նկատի ունենալով գյուղի երբեմնի մեծ լինելը, կողքի բերդի մնացորդների և ձորամիջին բազմաթիվ այրերի գոյությունը նույնացրել են Ստ. Օրբելյանի ցուցակում հիշատակված Բրտիայրք գյուղի հետ[1]։ Բայց դրանք հիմք չունեն, քանի որ Օրբելյանի Բրտիայրք գյուղը Գեղարքունի գավառի ցուցակում է և ոչ թե Սոդքի։

Այս գյուղի վրայով է անցնում Սևանի ավազանը Արցախին կապող հին ճանապարհներից մեկը։ Այն Դաշքենդից հետո լեռնային անմարդաբնակ տարածություններն անցնելով, մտնում էր Ծար իշխանանիստ ավանը և Թարթառի հովիտը (ներկա Քելբաջարի շրջանը), ուր, ինչպես հնում, այնպես էլ այժմ հայտնի են հանքային ջրերը՝ Իստիսու։ Ծարի իշխանական տանը՝ Դոփյանները տիրում էին նաև Սոդք գավառին կամ նրա մի մասին։ Դաշքենդ գյուղի

[1] Ջալալյան, II, 114—չինել է Բերդի այրք։ Լալայան, XIX, 16։